



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի  
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման  
ապահովում» ծրագիր

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական  
դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Միջառարկայական կապերի հաստատումը  
դասավանդման գործընթացում

Վերապատրաստող, մենթոր՝ Սյուզաննա Ափինյան

Ուսուցիչ՝ Արմինե Ավագյան

Վանաձոր 2023

## **Բովանդակություն**

Ներածություն: Հետազոտության նպատակները, խնդիրները	3-5
Միջառարկայական կապերի հաստատումը դասավանդման գործընթացում	6-15
Եզրակացություն	16-17
Օգտագործված գրականության ցանկ	18

## Ներածություն: Հետազոտության նպատակները, խնդիրները

Ի՞նչ ենք հասկանում «միջառարկայական կապեր» ասելով, ի՞նչ նպատակ է հետապնդում հետազոտությունը:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել, թե ինչ ենք հասկանում «միջառարկայական կապեր» ասելով, ինչու է այն անհրաժեշտ դասավանդման գործընթացում:

Հետազոտության խնդիրն է ուսումնասիրել և բացահայտել միջառարկայական կապերն ապահովելու արդյունավետ եղանակներ, որոնք խթան կհանդիսանան ուսուցման արդյունավետության բարձրացման համար:

Քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են տարբեր բնագավառներ, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը: Միջառարկայական կապերի հաստատումը նպաստում է գիտելիքների խոր և բազմակողմանի յուրացմանը, սովորողների աշխարհայացքի ձևավորմանը, նյութական աշխարհի ընդհանրացմանը, բնության և հասարակության երևույթներն ընկալելուն: Դրանք նպաստում են նաև սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացմանը, զարգացնում են տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական ունակությունները:

Դպրոցի առջև դրված կարևոր խնդիրներից մեկը սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունների ու հմտությունների զարգացումն է:

Միջառարկայական կապերի պահպանումը ժամանակակից դպրոցում ուսուցման կարևորագույն սկզբունքներից մեկն է: Դրա միջոցով իրականացվում է ուսումնադաստիարակչական խնդիրների ամբողջական լուծում: Միջառարկայական կապերի իրագործման հաջողությունն ապահովող կարևոր հանգամանք է նաև ուսուցչի՝ դասին մանրակրկիտ պատրաստվելը: Միջառարկայական բնույթի խնդիրների կազմումն ու լուծումը նպաստում են ճանաչողության գործընթացի ակտիվացմանը՝ խթանելով առարկայի նկատմամբ հետաքրքրության մեծացումը: Միջառարկայական բնույթի խնդիրների լուծումը պահանջում է անհրաժեշտ

գիտելիքների իմացություն հիմնական և հարակից առարկաներից, ինչպես նաև լուծման յուրահատուկ մեթոդների կիրառման կարողություններ և հմտություններ:

Միջառարկայական կապեր ստեղծելուն մեծապես նպաստում է նաև ուսուցիչների համագործակցությունը: Ուսուցումն արդյունավետ է այն դեպքում, երբ առկա է ուսուցիչ – ուսուցիչ համագործակցությունը: Անհերքելի են ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման դերն ու կարևորությունը նրանց մասնագիտական և անձնային աճի, հանրակրթական ուսումնական հաստատության հեղինակության, ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետության և հանրակրթության որակի բարձրացման գործընթացներում: Կրթության համակարգում կարևոր հիմնախնդիր է ուսուցիչների մասնագիտական զարգացման տարատեսակ հնարավորությունների ստեղծումը, որը կնպաստի որակյալ մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորմանը <sup>1</sup>: Ուսուցչի մասնագիտական զարգացումը սահմանվում է որպես մասնագիտական ծրագրերի ու միջոցառումների ամբողջություն, որը նպատակ ունի համալրելու նրա գիտելիքները, կարողությունները, հմտությունները, փորձառությունը և մասնագիտական գործունեությանն անհրաժեշտ մասնագիտական ու անձնային այլ որակները: Ուսուցիչների համագործակցությունը հարստացնում է նրանց դասավանդման փորձն ու նպաստում ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Միջառարկայական կապերը հնարավորություն են տալիս ստեղծել միասնական, ինտեգրված դասեր, որոնց ժամանակ երեխաներն աշխատում են հեշտությամբ և հետաքրքրությամբ, յուրացնում մեծ ծավալով օգտակար նյութեր՝ ձեռք բերելով գիտելիքներ և ձևավորելով համադրելու, ընդհանրացնելու կարողություններ:

Դպրոցական առարկաների փոխադարձ կապակցվածությունը սովորողներին համոզում է, որ գիտելիքների տարբեր ճյուղերի միջև չկան կտրուկ սահմաններ, որ գիտության տարբեր ոլորտները միմյանցից կտրված չեն, այլ փոխադարձաբար կապված են միմյանց հետ:

1.Տե'ս Հակոբյան Ֆ., Ուսուցիչների մասնագիտական զարգացման առանձնահատկություններն ու արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ կրթության համակարգում, Երևան, 2020, էջ 45:



Ժամանակակից հասարակության մեջ օրեցօր աճում է տեղեկատվության որոնման, վերլուծության, մշակման, պահպանման, տարածման անհրաժեշտությունը, այսինքն, հատկապես արդիական է դառնում տեղեկատվության հետ աշխատելու աշակերտների մշակույթի դաստիարակության խնդիրը:

Միջառարկայական կապերի շնորհիվ խոսքը հնարավոր է դառնում հարստացնել պատկերներով, ցույց տալ բանաստեղծական խոսքի և երաժշտական հնչողության ընդհանրությունը և այլն: Միջառարկայական բառապաշարի հիման վրա կատարվող վարժությունները դաստիարակում են մտածողությունը, սրում մայրենի և օտար լեզվի զգացողությունը:

Այսպիսով, եզրակացնում ենք, որ միջառարկայական կապերն իրական կապեր են, որոնք արտացոլում են աշխարհի օբյեկտիվ իրականությունը, պայմանավորում են ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու ձևերը: Դրանք հանդիսանում են ժամանակակից ուսուցման գործընթացի և սովորողների ճանաչողական գործունեության զարգացման կարևոր գործոն:

## **Գլուխ 1. Միջառարկայական կապերի հաստատումը դասավանդման գործընթացում**

Ինչպես նշվեց, ուսումնական աշակերտների կողմից գիտելիքները, կարողություններն ու հմտությունները յուրացնելու գործընթացն է, որի կարևոր պայմանը նրանց ինքնուրույնության ապահովումն է: Ուսուցման գործընթացն անհնար է առանց ուսուցչի և աշակերտի միաժամանակյա գործունեության: Մայրենի լեզուն առանձնահատուկ տեղ ունի սովորողի ձևավորման, նրա մտավոր առաջընթացի, վերլուծական և պատկերավոր մտածողության զարգացման, ինչպես նաև մնացած բոլոր առարկաների ընկալման և յուրացման համար: Շատ կարևոր է մայրենի լեզվի ուսուցումը տարբեր առարկաների հետ կապելն ու աշակերտների հանրակրթական գիտելիքները հարստացնելը:

Մանկավարժության մեջ միջառարկայական կապերի հիմնահարցին անդրադարձել են (Յ. Ա. Կոմենսկի, Հ. Պեստալոցի, Ֆ. Հերբարտ, Ա. Դիստերվեգ, Խ. Աբովյան և ուրիշներ) գերազանցապես ճանաչողական առումով՝ միջառարկայական կապերի իրականացումը համարելով ուսուցման բարելավման կարևոր միջոց:

Ուսուցիչը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը, որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի: Դասի ժամանակ մի առարկան կապելով մյուս առարկաների հետ՝ դասը ավելի հետաքրքիր, ինֆորմատիվ և արդյունավետ է դառնում: Երբ երեխան գիտակցում է, որ սովորելը դասին սովորածը կարող է կիրառել նաև հաջորդ դասին, ավելի ուշադիր և հետաքրքրված է լսում և մասնակցում քննարկմանը, փորձում է ինքն էլ գտնել միջառարկայական կապեր:

Միջառարկայական հետաքրքիր կապ կարելի է ստեղծել մայրենիի և երաժշտության միջև: Դասին երգն ու երաժշտությունը կարող են օգտագործվել որպես ուսումնասիրվող նյութի համար ընդհանուր հիմք: Նույնպիսի կապ կարելի է ստեղծել կերպարվեստի և մայրենիի միջև: Նկարները կարևոր ու անփոխարինելի միջոց են ուսուցողական ու դաստիարակչական բնույթի նյութերի առաջադրման համար: Նկարներով շատ ավելին կարող է ասել սովորողը: Միջառարկայական կապերի շնորհիվ աշակերտներն առավել ոգևորությամբ են ներկայացնում թեման, նույնիսկ պասիվ սովորողներն են ակտիվորեն մասնակցում դասին:

Միջառարկայական կապերի ստեղծման գործում շատ կարևոր է ուսուցչի դերը: Հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում: Ուսուցիչը կարող է ուղղորդել սովորողին, ստեղծել ուսուցման համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկն ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով միջառարկայական կապեր ստեղծելու մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է:

Միջառարկայական կապերի ստեղծումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Դրա համար բազմազան հմտություններ են անհրաժեշտ : Ուստի, այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն և ձեռքբերումները:



Կրտսեր դպրոցական տարիքում միջառարկայական կապեր գտնելու կարողություններ ձևավորելը նպաստում է երեխայի անկախ գործունեության զարգացմանը, խթանում փորձերի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը, պայմաններ ստեղծում համագործակցության համար: Երեխան պետք է մոտիվացված լինի ոչ միայն ուսումնական գործունեության արդյունքով, այլև հենց նրա գործընթացով: Սա նաև սեփական անձնային աճի, ինքնակատարելագործման, ընդունակությունների զարգացման դրդապատճառն է:

Միջառարկայական կապերի ստեղծումը մեծապես կարող է նպաստել սովորողների արժեքային համակարգի ձևավորման վրա: Արժեքային համակարգի ձևավորման հարցում կարևոր են համարվում հասարակության կյանքի սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային, սոցիալ-քաղաքական և գաղափարական, ինչպես նաև հոգևոր պայմանները, սոցիալական նորմերը (բարոյականության, իրավունքի, կրոնի և այլն), պատմական ժամանակահատվածի առանձնահատկությունները, տարածաշրջանային պայմանները, հասարակությունում գերակշռող արժեքները: Իսկ վերը թվարկվածներին ծանոթ լինելուն և յուրացնելուն նպաստում են միջառարկայական կապերը: Մեր էպոսի հերոսները, մեր նախահայր Հայկը աշակերտներին ոգեշնչելու լավագույն օրինակն են: Մայրենիի, կերպարվեստի, երաժշտության միջև ձևավորված միջառարկայական կապերի շնորհիվ սովորողը կծանոթանա և հարգանք կդրսևորի մայրենի լեզվի, ազգային մշակույթի նկատմամբ, կգնահատի ազգային արժեքներն ու ավանդույթները :

Ամենամեծ արժեքը հայրենասիրությունն է, և այն լավագույն կերպով կարելի է ներկայացնել մայրենիի ժամերին՝ զուգահեռներ անցկացնելով «Ես և շրջակա աշխարհը» առարկայի, երաժշտության ու կերպարվեստի հետ: Յուրաքանչյուր ուսուցիչ նախընտրում է որևէ ստեղծագործություն, որը նրան օգնում է իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Մեր ավանդույթներում վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը<sup>2</sup>:

Պետք է աշակերտին ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը, ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ, պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու

2.Տե՛ս Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 14:



ավանդույթների մասին: Եվ, վերջապես ,պիտի հստակ օրինակներով ներկայացնել մայրենի լեզվի, ազգային երաժշտության, կտավի ամենամեծ դերը, այն է՝ ազգապահպանության հարցում անփոխարինելի լինելը:

Միջառարկայական կապերի ստեղծումն էապես կարող է ազդել սովորողի բառապաշարի զարգացման ու հարստացման վրա: Երեխաների ընդհանուր զարգացումն ապահովելու համար ոչ միայն նրանց մեջ լավ կարդալու, գրելու և խոսելու կարողություններ պետք է ձևավորել, այլև բազմապիսի աշխարհահաճանաչողական տեղեկություններ տալ: Միջառարկայական կապերի կիրառումը ոչ միայն հետաքրքիր ու ճանաչողական է դարձնում դասերը, այլ նաև դառնում է կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման միջոց: Այս առումով մայրենի լեզվի դասերը կարող են լայն հնարավորություններ ստեղծել, որովհետև այդ դասերն իրենց մեջ ամփոփում են տարբեր ձևերի, գիտությունների, տեխնիկայի ու տարաբնույթ այլ հարցերի վերաբերյալ եղած տարրական տեղեկությունները:

Դասագրքերում տեղ գտած նկարները դրանց գեղարվեստական ձևավորման նպատակ են հետապնդում, հետո նոր՝ ճանաչողական, այս կամ այն տեղեկության, նյութի ու գաղափարի հաղորդման: Դասագրքերում եղած նկարները պետք է խորապես գեղարվեստական ու գրավիչ լինեն, բավարարեն ժամանակի գեղագիտական պահանջը, լինեն մատչելի, բնական ու երևակայությունը զարգացնող:

Աշակերտներն ուսումնասիրում են նկարները, ուսումնասիրությունից հետո պատմում են նկարների շուրջ իրենց զգացողությունների մասին:

Տարրական դպրոցում միջառարկայական կապեր կարելի է ստեղծել կերպարվեստի և մաթեմատիկայի միջև: Արդյունքում սովորողները կկարողանան ճանաչել և պատկերել որոշ երկրաչափական պատկերներ, կունենան պարզ տարածական պատկերացում, կճանաչեն շրջապատող աշխարհը, կզարգանա նրանց դիտողականությունը:



Մայրենի լեզվի դասերին միջառարկայական կապերի իրագործման երեք կարևոր եղանակներ կան.

1. ուսուցման գործընթացին անդրադարձ , որն ամենից առաջ կապվում է ներառարկայական կապերի ճիշտ ու տեղին օգտագործման հետ, այն, ինչ աշակերտներն անցել են նախորդ դասերին կամ ուսուցման նախորդ տարիներին, հետևողականորեն պետք է կրկնվի,
2. ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումն ուսուցման պրոցեսում, բազմաթիվ գիտելիքներ ու կարողություններ, որոնք երեխան ձեռք է բերել մինչ դասը, պետք է հմտորեն օգտագործել ուսուցման պրոցեսում,
3. այլ գիտությունների տվյալների կիրառություն, որը կարող է գործադրվել ուսուցման պրոցեսում:

Ուսուցիչը պետք է դիմի տարբեր գիտությունների տվյալների ու փաստերի օգտագործմանը, որպեսզի դասը հետաքրքրական ու դաստիարակչական դառնա: Տարրական դասարաններում դրվում են բոլոր գիտելիքների ու կարողությունների հիմքերը, երեխաների առջև բացվում են բոլոր փակ դռները: Նրանք ծանոթանում են բնության գաղտնիքներին, հարստանում է նրանց խոսքն ու մտածողությունը: Երեխաներին պետք է սովորեցնել շրջապատող աշխարհում տեսնել ու գնահատել գեղեցիկը, լավն ու բարին և գնալ այդ ճանապարհով: Իսկ դրա համար տարրական դասարանների մայրենի լեզվի դասերը լայն հնարավորություններ են ստեղծում, որովհետև այդ դասերն իրենց մեջ ամփոփում են արվեստի տարբեր ձևերի,

գիտությունների, տեխնիկայի ու տարաբնույթ այլ հարցերի վերաբերյալ եղած տարրական տեղեկությունները:

Նկարը տարրական դասարանների բոլոր դասագրքերի կարևոր ու առանձնահատուկ բաղադրիչներից մեկն է: Նկարները լայնորեն օգտագործվում են ինչպես այբբենարաններում, այնպես էլ ընթերցարաններում ու մայրենի լեզվի դասագրքերում: Նկարները կարևոր ու անփոխարինելի միջոց են ուսուցողական ու դաստիարակչական նյութի առաջադրման համար, քանի որ բառերով այդ ամենը հաղորդելու հնարավորություն չկա:

Յուրաքանչյուր անգամ ուսուցիչն իր համար պետք է պարզի տվյալ նկարի հիմնական նպատակը և ապա անցնի ուսուցման պրոցեսում դրա օգտագործմանը: Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում որոշակի նյութեր կան կերպարվեստի հայ նշանավոր գործիչների՝ Գ.Բաշինջաղյանի, Հ.Այվազովսկու, Մ.Սարյանի մասին: Այս նյութերն ուսումնասիրելիս պետք է տեղեկություններ տալ ոչ միայն արվեստի այդ խոշոր, աշխարհահռչակ գործիչների մասին, այլև նրանց գործերի:



Գեղեցիկի աշխարհը թափանցելու այդ կարևոր ու անփոխարինելի միջոցներից մեկն էլ երգն ու երաժշտությունն են, որոնք լայնորեն կարող են օգտագործվել մայրենիի դասերին: Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները: Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ - անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական,

գեղագիտական, հուզական որակներով: Այն նպաստում է նաև սովորողի երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը: Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես՝ կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար:

Երաժշտական կարողությունները միայն երաժշտության դասերին չէ, որ պետք է դրսևորվեն, դրանք իրենց միանգամայն գործնական ու խիստ օգտակար գործադրությունը պետք է ունենան նաև մայրենիի դասերին: Մայրենիի դասագրքերում բազմաթիվ մանկական բանաստեղծություններ կան, որոնք երգահանների կողմից օգտագործվել են մանկական երգերի համար որպես խոսքային հիմք: Երգի և մայրենիի միջև ձևավորված միջառարկայական կապը նպաստում է կրտսեր դպրոցականի՝ դասի հանդեպ հետաքրքրության մեծացմանը, ինչպես նաև բառապաշարի հարստացմանն ու խոսքի գեղեցկացմանը:

Մայրենիի, երաժշտության և կերպարվեստի միջև միջառարկայական կապերի ստեղծումը կարող է արտահայտվել հետևյալ կերպ՝ սովորողը

1. կարողանա ազատ հաղորդակցվել հայերենով, հասկանալ և պատմել երաժշտական հեքիաթների և մանկական խաղերի բովանդակությունը,
2. կարողանա նկարել պատկերներ խաղերից կամ հեքիաթային կերպարների նկարներ:

Մայրենի, կերպարվեստ և տեխնոլոգիա առարկաներ՝

1. կարողանա ազատ հաղորդակցվել հայերենով, պատմել, թե ինչպես են ընթանում իրենց ընտանեկան, ծիսական և պետական տոները,
2. կարողանա ազատ հաղորդակցվել հայերենով և ներկայացնել այդ տոների մասնակիցներին՝ իր ընկերներին, հարազատներին,
3. կարողանա պատրաստել տոնական նկարներ,
4. կարողանա պատրաստել տոնական նվերներ,
5. կարողանա ստեղծել օպերային հերոսների նկարները կամ նկարչական ձևավորում անել,
6. կարողանա պատրաստել թեմատիկ հերոսների տիկնիկներ,

7. գրագետ կապակցված խոսքով ներկայացնի հայ ժողովրդական ավանդույթները, ծեսերը,

8. կարողանա ստեղծել և ձևավորել ծիսական պարագաներ,

9. կարողանա ներկայացնել բնության զարթոնքի և ժողովրդական ծեսի կապը և այլն:

Արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում է կապակցված խոսք, իսկ այս բնույթի կապակցված խոսքի ձևավորման ժամանակ անխուսափելի է նկարչական տերմինների օգտագործումը, դրանք հետագայում դառնում են նրանց բառապաշարի մասը:

Տեխնոլոգիայի և կերպարվեստի դասաժամերին ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ կատարելագործվեն սովորողների աշխատանքային ունակությունները, զարգանան տեխնիկական մտածողությունը, տարածական պատկերացումները, ստեղծագործական մտածողությունը և այլն: Տեխնոլոգիայի և կերպարվեստի դասաժամերի մեծ մասը պետք է կազմակերպել մյուս առարկաների հետ օրգանական կապի մեջ, որը հնարավորություն կտա զարգացնելու սովորողների տարբեր որակներ: Կապը տեխնոլոգիայի և նկարչության հետ նաև շատ կարևոր է մյուս առարկաների համար:

Մաթեմատիկական երեխային իրական կյանքի հետ կապելու լրացուցիչ հնարավորություն է ընձեռում: Միջառարկայական սերտ կապ կա նաև մայրենիի և մաթեմատիկայի միջև: Տեքստային խնդիրներն իրենց բովանդակությամբ մաթեմատիկական հաշվարկ կատարելու նպատակ հետապնդելուց բացի, նաև միջոց են միջառարկայական կապերի ապահովման և երեխաների համապիտանի կարողությունների զարգացման համար<sup>3</sup>:

Միջառարկայական կապերի օգտագործումն ամենից առաջ կապվում է արդեն ձեռքբերվածի կրկնության ու կիրառման, ապա նոր, անծանոթ նյութի հաղորդման հետ:

Տարրական դասարաններում միջառարկայական կապերի ճիշտ, բազմակողմանի ու արդյունավետ օգտագործումը հեշտ է, որովհետև ուսուցման այս օղակում դասավանդվող բոլոր ուսումնական առարկաները տանում է միևնույն

3. Տես՝ Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե., 2018, էջ 11:

տեղեկություններ պետք է ունենա:

ուսուցիչը, և նա շատ լավ գիտի, թե որ առարկայից աշակերտների գիտելիքներն ու կարողությունները ինչ մակարդակի են, և նա ինչքանով կարող է դրանք օգտագործել:

Բայց նաև դժվար է, որովհետև ուսուցիչը տարբեր գիտություններից, արվեստի ճյուղերից ու այլ ճանաչողական բնագավառներից բարձր ու համակողմանի

Տարբեր առարկաներից ստացած գիտելիքների ու տեղեկությունների միջև տրամաբանական կապերի ստեղծումով նպաստում ենք երեխաների մտածողության ձևավորմանը, ինչպես նաև ձևավորվում է խորհող անձնավորություն: Միջառարկայական կապերի օգտագործումն այդ տեսակետից մեծ հնարավորություններ է ընձեռում, և ուսուցիչը պետք է կարողանա ուսուցողական այդ հնարավորությունները տեղին ու ճիշտ օգտագործել:

Միջառարկայական կապերի օգտագործման կարևոր եղանակ է մայրենի լեզվի դասերին ձեռքբերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումը: Միջառարկայական կապերի իրագործումը ենթադրում է սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության ձևավորում: Վ. Վ. Դավիդովը նշում է, որ «միջառարկայական կապերը մեթոդաբանական գործառույթ են կատարում»:

Նպատակահարմար է դասարանում օգտագործել միջառարկայական կապեր նաև աշխարհի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար, որի օգնությամբ դպրոցականները սովորում են տեսնել նմանատիպ օրենքներ և օրինաչափություններ որոշակի գործընթացների և երևույթների զարգացման մեջ:

Այսպիսով, վերը նշվածից ելնելով՝ եզրակացնում ենք, որ այսօր դժվար է պատկերացնել աշակերտների բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիարակության իրականացումն առանց դասապրոցեսում միջառարկայական կապերի օգտագործման, առանց երեխաների հետաքրքրությունների բարձրացման ու ինքնուրույն զարգացման:

## Եզրակացություն

Այսպիսով, վերը բերվածից եզրակացնում ենք, որ հանրակրթական դպրոցներին ներկայացվող ժամանակակից պահանջների իրականացումը նոր խնդիրներ է առաջադրում ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում: Այս առումով կարևոր է միջառարկայական կապերի ստեղծումը: Միջառարկայական կապերը հարաբերությունների հաստատումն է երկու առարկաների ուսումնական նյութի կառուցվածքային տարրերի միջև: Ուսումնական նյութի կառուցվածքային տարրերը երկու կամ ավելի առարկայական ոլորտներից միավորելով մեկ իմաստային խմբի մեջ՝ օգտագործվում են նյութի ուսումնասիրության կամ միջառարկայական խնդիրների լուծման գործընթացում: Միջառարկայական կապերն օգնում են դիմակայել հանրակրթության մարտահրավերներին և բարձրացնել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը:

Միջառարկայական կապերի օգտագործումը հնարավորություն է տալիս միևնույն առարկայի կամ երևույթի, անձի և իրադրության մասին տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքներն ու տեղեկությունները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ: Դա օգնում է բացատրվող նյութի ճիշտ ու խոր յուրացմանը, անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների փոխանցմանն ու օգտագործմանը, որը հսկայական զարգացնող արժեք ունի սովորողների համար: Ուսուցման պրոցեսում աշակերտների գործունեության և պահանջմունքների, նպատակների, հետաքրքրությունների համապատասխանությունից կախված՝ նյութը և մեթոդներն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ դասարանը, նրա առանձին խմբերը կազմող աշակերտների հնարավորությունները, պահանջմունքները, շարժառիթներն ու հետաքրքրությունները: Միջառարկայական կապերի իրագործումը նպաստում է գիտելիքների խոր և բազմակողմանի յուրացմանը, սովորողների գիտելիքների գիտական մակարդակի բարձրացմանը, զարգացնում տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական ունակությունները: Միջառարկայական

կապերի իրագործումը հնարավորություն է ստեղծում խնայել ժամանակը, սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունների և հմտությունների ձևավորման համար ստեղծում նպաստավոր պայմաններ: Այս պարագայում անգամ թույլ սովորող աշակերտները ոգևորությամբ մասնակցում են աշխատանքներին և ունենում նկատելի հաջողություններ: Սովորողների մոտ ընդլայնվում է հետաքրքրությունների շրջանակն առարկաների նկատմամբ: Ուսուցման գործընթացում միջառարկայական կապերին կարևոր տեղ հատկացնելն ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից է, դրա պահպանումը ժամանակակից դպրոցում ուսուցման կարևորագույն սկզբունքներից մեկն է: Թեմայի ուսուցման ժամանակ ստեղծելով միջառարկայական կապեր մայրենիի, մաթեմատիկայի, երաժշտության, կերպարվեստի, տեխնոլոգիայի միջև՝ ուսուցիչը հնարավորություն է տալիս աշակերտներին նախկինում ունեցած գիտելիքները համակարգել, ամրապնդել և կիրառել, նպաստում անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, քննադատական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հանրակրթական գիտելիքների հարստացմանը: Միջառարկայական կապերն օգնում են աշակերտներին նյութն ավելի հեշտ ընկալել և ինքնուրույն ուսումնառության հմտություններ ձևավորել:

Ուսուցիչը դասի ընթացքում նոր նյութը պատմելիս կամ բացատրելիս աշակերտներին հիշեցնում կամ հարցնում է, թե մյուս առարկաներից իրենք ինչ գիտեն տվյալ երևույթի վերաբերյալ: Նա, հիմնվելով աշակերտներին հայտնի գիտելիքների վրա, աշխատում է նոր նյութը կամ գիտելիքները հասկանալի դարձնել, ստեղծել ուսումնասիրվող երևույթի համակողմանի, ամբողջական պատկերացում:



## **Օգտագործված գրականության ցանկ**

1. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները (ձեռնարկ ուսուցիչների համար), Ե.- 2004:
- 2.Մ. Աստվածատրյան և ուրիշներ,Մանկավարժական միտք,2012:
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե., 2018:
4. Հակոբյան Ֆ., Ուսուցիչների մասնագիտական զարգացման առանձնահատկություններն ու արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ կրթության համակարգում, Երևան, 2020:
- 5.« Երաժշտություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր: